



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

<< 24 >> *ապրիլ* ..... 2014թ.  
ք. Արմավիր

N 62 - - Ա

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 13-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 19-ի N 363-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզին հատկացված միջոցներով նախատեսված շինարարության, հիմնանորոգման, այդ աշխատանքի հետ կապված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքների ձեռքբերման նպատակով.

հրամայում եմ՝

1. Սահմանել գնումների պատասխանատու ստորաբաժանում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությանը՝ վերապահելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 19-ի N 363-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզին հատկացված միջոցներով նախատեսված շինարարության, հիմնանորոգման, այդ աշխատանքի հետ կապված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքների ձեռքբերման պարտականությունների կատարումը:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությանը /Դ. Դանիելյան/ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում իրականացնել պատասխանատու ստորաբաժանմանը վերապահված գործառույթները և արդյունքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ